ՔԵՐԹՈՒԱԾՔ

ՈՐԱՏԵԱՅ ՏԱՂ ՑԱԻԳՈՍՏՈՍ

ԶՈՐՊԻՍԻ՞ այր կամ դիւցազն առնուս, Կլիէ դու, 'ի նըւագ,
Նըրբաձայն 'ի սուր սըրինգ, կամ 'ի փանդիռն հըռչակել.
Զո՞ 'ի դից, և կամ թէ զո՞յր ըզգըրուատիսըն վեհապանծ
Գանգիւնն 'ի յերգ կըրկնեսցէ
Ի բարձրաբերձ անդ 'ի գիտակս Ելիկոնի հովանաւորս,
Կամ 'ի Պինդոս գերածայր, կամ 'ի Հեմոս ցըրտասառոյց.
Ուստի երբեմըն մայրիք յախուռն ըզկնի երթեալք հետոց
ԶՕրփէոսին քաղցրաձայն,
Որ զի զհոսմունս արշաւասոյր և զյորդահոս ռախիցըն վազ
Իւր մայրենի արուեստիւն ոտնակառեալ յամեցոյց.
Եւ այնքան հեշտ՝ մինչև զկաղնիս ածել 'ի ճեմ մըտադիւրս
Ի քաղցրաձայն լարից հընչիւն։
Զի՞նչ այլ յառաջ քան զգըրուատիսըն Հօր սովորս առից 'ի յերգ,
Որ ըզգործս համանգամայն և զաստուածոց և զմարդկան,
Որ զերկիր և զծով անդունդ, և զանազան ժամանակօք
Ըզծիր վարէ զաշխարհիս.
Ուստի այլ ոչ գայ 'ի ծընունդ ոք քան ըզնա մեծագոյն,
Եւ ոչ նըման ոք նըմա, կամ թէ նըմին հանգունատիպ.
Սակայն պարծանս և Պալլաս մեծապայծառ ժառանգեաց
Նորուն փառաց զուգական։
Եւ զքէն համբուն, քաջախիզախ Սպանդարամետ մարտագոռ՝
Լըռեցից ոչ, և զքեզ իսկ ո՛վ կոյսդ ոխերիմ գազանաց
Խըստայն և ամեհեաց. և ոչ ըզքեզ՝ Գուշակդ ահեղ
Նետիւքըդ քո դիպաձիգ։
Ոգեցից և զԱլկիդէս, նա և զորդեակըն Լեդայ,
Մինն 'ի ձիս, այլում 'ի զէնս գըլեալ մարտից յաղթական.
Ցորոց աստեղըն լուսափայլ իսկոյն 'ի բարձր եթերէն
Ի ծագել անդ նաւաստեաց,
Դարավէժ թաւալագլոր յուզեալ գըլին ջուրք 'ի քարանց,
Խաղաղին անդէն հողմունք, խուճապական ցընդին և ամպք,
Եւ սպառնալից ալեաց կոհակք խորասուզին անդր 'ի ծով,
Զի այս եղեն նոցա կամք։
Ցետ սոցա զՀռոմուլոս յիշեցից նախ առաջին,
Կամ թէ արդեօք զանդորրաւէտն ըզՊոմպիլեայ պետութիւն,
Կամ սէգ խըրձունս ըզՏարկուինեայ, կամ զանուանի մահ Կատոնի,
Ինձ երկեան է համբուն։
Ըզհռեգուղոս և զՍկաւրեանս, և զգերապանծըն Պաւղոս,
Որ մեծն ոգւոյն ոչ խնայեաց՝ 'ի Պիւնեցւոյն յաղթանակել.
Եւ զՓաբրիկոս՝ երախտայուշ առից մըտօք հըռչակել
Ի մեծափառըն Մուսա։

digitised by A.R.A.R.@

Ըզսա և զգիտախոհըն կուրիոս և զկամիլլոս
Օգտաւէտըս գործեաց 'ի գուպարաց ճակատամարտ՝
Դըժպըհի աղքատութիւն և հայրենի անդ վիճակեալ,
Զոյգ և պատշաճ բնակարան։
Աճէ 'ի սփիւռ մեծաձիգ՝ զերդ ծառ զանխուլ 'ի պահու՝
Հըռչակ անուան Մարկեղեայ. և աստ Յուլեան լուսապայծառ
Փայլէ 'ի բնաւըս շողշողուն, որգունակ ինք և լուսին
Յաստեղախումբն 'ի կաճառ։
Հայր և պահապան և խնամակալ մարդկան դրօհի,
Ո՛վ Զըրուանեայ դու ծընունդ, քեզ 'ի բախտէն հաւատացեալ
Հոգ խնամոց կեսարու մեծի, հըզօր դու իշխեսցես,
Լիցի կեսար քեզ երկրորդ։
Նա թէ զՊարթևս ըսպառնալիցս 'ի մարտ ընդդէմ Լատինի
Ըզնըւաճեալըն արդարացի յաղթանակաւ վանեսցէ,
Եւ կամ բնաւ թէ տիրեսցէ ազգացն Հընդկաց և Սերաց
ՅԱրևելից անդր 'ի մարզ,
Ի վայր քան զքեզ՝ արժարութեամբ վարեսցէ զլայն տիեզերս.
Իսկ դու զՈլիմբ որոտագոչ ահեղ կառօք սարսեսցես,
Եւ զահագին կայծակունսդ արձակեսցես 'ի բարձանց
Ի պիղծ մայրիսն անտառաց։

Թարգմանեաց
Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՐՈՍԵԱՆ

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ

Այդ ի՞նչ Հրեշտակ ճերմակ թևով
Որ 'ի յերկնից առ մեզ կու գայ
Լի շընորհքով, փայլուն դէմքով.—
Նա՝ ամենուն վերայ գըթայ,
Զամէնք գըգուէ երկնախընամ.—
Դա Հրեշտակն է ողորմութեան։

Լեռներ, ձորեր կըտրէ, կ'անցնի
Հասնելով մօտ անճար խեղճի,
Առատ ձեռքով կու տայ ոսկի,
Շըրթունքներէն մեղըր կաթի։
Աստուածակիր ու մեծ հոգւով
Մեր ամենուս վերայ հըսկէ,
Սըրտմաշ հոգերս գուշակելով
Խուլ հառաչանք մեր նա լըսէ։

Այդ ի՞նչ Հրեշտակ ճերմակ թևով
Որ 'ի յերկնից առ մեզ կու գայ,
Լի շընորհքով փայլուն դէմքով,—
Նա՝ ամէնուն վերայ գըթայ,
Զամէնք գըգուէ երկնախընամ.—
Դա՝ Հրեշտակն է ողորմութեան։

Լալագին մօր, ցըրտահար տըղուն,
Եւ անկողին ընկած ծերուն
Նա կը գըտնէ տունն, կը տանի
Ըզգեստ, հացիկ և վառելի.

Ճամբուն վերայ ընկածներուն՝
Ձեռք օգնութեան կ'երկընցընէ,
Փոխան պաղ ցուրտ խըրատներու
Յոյս գըթութեան կը ներշընչէ։

Այդ ի՞նչ Հրեշտակ ճերմակ թևով
Որ 'ի յերկնից առ մեզ կու գայ
Լի շընորհքով, փայլուն դէմքով.—
Նա՝ ամենուն վերայ գըթայ,
Զամէնք գըգուէ երկնախընամ.—
Դա՝ Հրեշտակն է ողորմութեան։

Հոգած հոգւով՝ նա ամենուն
Յետ նիւթական առատ հացի,
Կու տայ խըրատ վարանելոյն
Որ յուսահատ չըկորսուի։
Կորովալից նորա խօսքեր
Կը փարատեն զամէն վըշտեր,
Մըխիթարուած գոհ կը լինին
Հոգին մարդոյ, միտք, սիրտ, մարմին։

Այդ ի՞նչ Հրեշտակ ճերմակ թևով
Որ 'ի յերկնից առ մեզ կու գայ
Լի շընորհօք, փայլուն դէմքով.—
Նա ամենուն վերայ գըթայ,
Զամէնք գըգուէ երկնախընամ.—
Դա՝ Հրեշտակն է ողորմութեան։

digitised by A.R.A.R.@